

ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Մույն կարգը սահմանում է ԵՊՀ ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման կարգն ու պայմանները:
2. Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների կողմից և հաստատվում է ԵՊՀ գիտական քաղաքանության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի կողմից: Յուրաքանչյուր մասնագիտության համար հարցաշարը պարունակում է 100 հարց, ընդ որում 75 հարց բակալավրիատի ընդհանուր մասնագիտական կրթամասից և 25 հարց ասպիրանտուրայի մասնագիտությունից մագիստրոսական ծրագրի շրջանակներում:
3. Ելնելով մասնագիտության առանձնահատկություններից՝ մասնագիտական քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է ընդունող հանձնաժողովը:
4. Բանավոր քննությունը ձայնագրվում է, և արդյունքները պահպանվում են հրապարակվելուց հետո առնվազն 24 ժամ:
5. Մասնագիտական քննությունից երկու աշխատանքային օր առաջ՝ հրապարակված հարցաշարից կազմվում են հարցատոմսեր, որոնք հաստատվում են հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և հաստատության կնիքով: Դիմորդը պատահականության սկզբունքով ընտրում է 2 հարցատոմս՝ մեկը ընդհանուր մասնագիտական կրթամասից 3 հարց պարունակող, և մյուսը՝ ասպիրանտուրայի մասնագիտությունից 1 հարց պարունակող: Հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերանայվում են:
6. Հարցատոմսում յուրաքանչյուր հարց գնահատվում է 5 (հինգ) միավոր, գնահատման քայլը՝ 1 (մեկ) միավոր: Բանավոր քննության դեպքում մինչև պատասխանելը, իսկ գրավոր քննության դեպքում մինչև գրել սկսելը դիմորդը կարող է մեկ հարց փոխել պատահականության սկզբունքով վերցնելով մեկ հարցատոմս և փոխելով իր

հարցատոմսի տվյալ համարի հարցը նոր հարցատոմսի նույն համարի հարցի հետ:
Փոխված հարցը գնահատվում է առավելագույնը 3 (երեք) միավոր:

7. Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդն ստացել է առնվազն 13 (տասներեք) միավոր:

8. Մասնագիտական քննության անփոփոխ գնահատականը հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականն է:

9. Մասնագիտական քննության բողոքարկյան ընթացակարգային պահանջներն են՝

1) Դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել հանձնաժողովին՝ արդյունքները հրապարակվելուց հետո մեկ ժամվա ընթացքում, հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր բողոքը, որը քննարկվում է նույն օրը:

2) Դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում լսվում է ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում կայացվում է որոշում՝

ա. գնահատականը թողնել անփոփոխ,

բ. գնահատականը բարձրացնել

3) Ընդունված որոշման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի կողմից:

4) Գնահատականի փոփոխման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:

5) Մասնագիտական քննության գնահատականը կարող է բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:

10. Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում: